ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ (2018**թ**.)

Առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի շրջանակում կառուցվել է Սևանի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքը, տրամադրվել կահույք և սարքավորումներ, նաև Վանաձորի բժշկական կենտրոնի մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքն է հագեցվել սարքերով և կահույքով: Հիմնանորոգվել, կահույքով և սարքավորումներով հագեցվել է Արտաշատի բժշկական կենտրոնի հիվանդանոցային մասնաշենքը:

Ծխելու վնասակարության, առողջ ապրելակերպի, առողջության ամրապնդման, հիվանդությունների կանխարգելման վերաբերյալ հանրային իրազեկման արշավ է իրականացվել, կազմակերպվել են հանդիպումներ հասարակական սպառողական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ, մշակվել են տեղեկատվական թերթիկներ, նկարահանվել են սոցիալական գովազդներ, տեսանյութեր, պատրաստվել են պաստառներ, կազմակերպվել են հարցազրուցներ:

Ձեռնարկվել են քայլեր **պետական պատվերի միջոցների հաշվին դեղերի ձեռքբերման և փոխհատուցման մեխանիզմներ ներդրնելու** համար: Ստեղծվել է դեղերի և բժշկական նշանակության ապրանքների տեխնիկական բնութագրերի օրինակելի ձևերի բազա:

Պետական բյուջեի միջոցներով հնարավորություն է տրվել գնելու 15 անուն մանկական հակաքաղցկեղային դեղեր՝ ծածկելով երկրի ամբողջ պահանջարկը:

Առողջապահական համակարգում դեպքերի անհատական վարման ինստիտուտի (case management) **ներդրման** նպատակով մշակվել են բժիշկ-փորձագետների գործունեության ընթացակարգը, բժիշկ-փորձագետների մասնագիտական բնութագրերը:

Քայլեր են կատարվել ուղղված առողջապահական կազմակերպությունների **ֆինանսական թափանցիկության ապահովմանը**:

Առողջության օղակի բուժաշխատողների (39 բժիշկ, 36 բուժքույր) համար «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության աջակցությամբ կազմակերպվել են **պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման** վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ:

Շարունակվել են **կլինիկական ուղեցույցների**, **պացիենտի վարման գործելակարգերի**, **ընթացակարգերի** թարգմանումը, տեղայնացումը ու ներդրումը:

Հիվանդանոցային և արտահիվանդանոցային համակարգերի օպտիմալ կառուցվածք ունենալու համար քարտեզագրվել են ՀՀ մարզերի հիվանդանոցային և արտահիվանդանոցային բժշկական կազմակերպությունները, մշակվել են բժշկական հաստատությունների մակարդակավորման սկզբունքները:

Բնակչության ռիսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման նպատակով իրականացվել է շուրջ 437550 սքրինինգային հետազոտություն. 50500 ՊԱՊ թեստ, 132700 քաղաքացու մոտ իրականացվել է արյան մեջ քաղցի գլյուկոզի հետազոտություն, 237000 քաղաքացի անցել է զարկերակային

գերճնշման հայտնաբերման սքրինինգ, ինչպես նաև հղիության 36-38 շաբաթական ժամկետում իրականացվել է շուրջ 17350 մեզի և արյան երրորդ հետազոտություն:

Մշակվել է **բուժօգնության գների հաշվարկման մեթոդաբանության** նախնական տարբերակը, տվյալների հավաքագրման ձևաչափը, ինչպես նաև գների հաշվարկման ավտոմատացված մոդուլը՝ մանկաբուժական ծառայությունում ամենաշատ փոխհատուցվող հիվանդությունների հաշվարկման օրինակով:

Մշակվել է «Բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում գլխուղեղի սուր և/կամ ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիա ծառայությունների կազմակերպման կարգը», ըստ որի 2019 թվականից տարեկան շուրջ 250 **պացիենտ սուր իշեմիկ ինսուլտի դեպքում բուժում կստանա պետպատվերի շրջանակներում**:

Տնտեսումների հաշվին մոտ 20%-**ով բարձրացվել է** ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնություն իրականացնող կազմակերպությունների **բուժանձնակազմի աշխատավարձը**:

Վերանայվել է «Stent for life» **ծրագիրը**՝ սրտի անհետաձգելի վիրահատության ծառայությունների շրջանակներում ամբողջ բնակչության համար իրականացվում է ինֆարկտ-պատասխանատու պսակային զարկերակի դեղապատ ստենտի տեղադրում ոչ դեղապատ ստենտի փոխարեն: Իջեցվել են ստենտավորման գները՝ ավելի քանի 250.000 դրամի չափով:

Մարզերի կադրային պահանջարկը համալրելու նպատակով՝ շուրջ 40%-ով աճել է **նպատակային կլինիկական օրդինատուրայի տեղերը**՝ 35-ից հասցնելով 49-ի: Մարզերում ամենապահանջված մասնագիտություններով ընդունված կլինիկական օրդինատորները ուսումնառության ավարտին աշխատանքի կնշանակվեն մարզային առողջապահական կազմակերպություններում: Նախարարության միջնորդությամբ մարզերում աշխատանքի է նշանակվել 43 բժիշկ, որոնցից 32-ը նպատակային կլինօրդինատուրայի շրջանավարտներ:

Թարմացվել է **Շտապօգնության ծառայության** ավտոպարկը: ՀՀ առողջապահության նախարարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության առևտրի նախարարության միջև ստորագրված համաձայնագրի շրջանակներում թվով 65 շտապ օգնության ռեանիմոբիլ և թվով 135 շտապ օգնության գծային մեքենա հատկացվել է Երևանի Շտապօգնության ծառայությանը և հանրապետության բժշկական կենտրոններին:

Երևանի ու մարզերի առաջնային օղակի շուրջ 15000 **բուժաշխատող իրավունք է ստացել օգտվելու սոցփաթեթից**, որից այսօր օգտվում են պետական հիմնարկների աշխատակիցներն ու ուսուցիչները՝ բացառությամբ ամենամյա պարտադիր բուժզննության ծառայությունը: